

# ԲԼԻՑ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ. ԱՆՈՒՇ ՄԽԻԹԱՐՅԱՆ

28.09.2023 13:34



**Հարգելի՛ ընթերցող,**

**Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում մեր նոր բլից հարցազրույցը փաստաբան Անուշ Մխիթարյանի հետ:**

**Անուշ Մխիթարյանը փաստաբանությամբ զբաղվում է 1996 թվականից և փաստաբան դառնալը համարում է իր կյանքի մեծագույն ձեռքբերումներից մեկը:**

**1. Ինչպե՞ս է սկսվում և ավարտվում Ձեր օրը**

Եթե օրն արևային է ապա՝ պատուհանի մոտ արևին նայելով և ավարտվում է երեկոյան հարազատներիս բարի գիշեր մաղթելով

**2. Ու՞մ հետ սուրճ կխմեիք այս պահին**

Ընկերուհուս

**3. Ո՞րն է Ձեր ամենասիրելի վայրը Երևանում**

Հատուկ սիրելի վայր չունեմ Երևանում, քանի որ ավելի շատ բնության սիրահար եմ

**4. Ինչպե՞ս եք նշում Ձեր ծննդյան տարեդարձը**

Որպես կանոն նշում եմ մեր տանը, հարազատներիս հետ միասին

**5. Ձեր կյանքի ամենամեծ ձեռքբերումը**

Հարազատներիս սիրուն արժանանալը և փաստաբան դառնալը

**6. Դատական նիստից հետո հոգնածությունը թոթափելու լավագույն միջոցը**

Եթե օրն ավարտվում է, նախընտրում եմ քայլել որևէ ծառուղով, երաժշտություն լսել կամ միայնակ հանգստանալ տանը

**7. Քչերը գիտեն, որ Դուք...**

Նաև զբաղվում եմ տնային գործերով , պատրաստում եմ թխվածք կամ որևէ այլ ուտեստ

**8. Ինչի՞ մասին երբեք չեք բարձրաձայնի**

Իմ թուլությունների մասին (ծիծաղում է)

**9. Սովորություն որից փորձում եք ձերբազատվել**

Գիշերները վստահորդներիս գործերի մասին մտածելուց

**10. Եթե Ձեզ էլ մի օր փաստաբան պետք լինի, ու՞մ կդիմեք**

Բոլոր այն ընկերներին, ովքեր ինձ հետ ազնիվ կլինեն

**11. Ո՞վ կամ ի՞նչն է Ձեր ոգեշնչման աղբյուրը**

Մարդկանց օգնելու մեծագույն ցանկությունը և արդարամտությունը, որոնք ժառանգել եմ ծնողներիցս

**12. Կարգապահական պատասխանատվությունից եք վախենո՞ւմ, թե՞ վերելակում փակված մնալուց**

Վերելակում փակված մնալուց, որովհետև սարսափում եմ փակ տարածքներից

**13. «Ապրել, ապրել, այնպես ապրել...» ավարտեք միտքը Ձեր տարբերակով**

...Որ երբևէ քո գոյության համար վատ չզգա ոչ ոք՝ այդ թվում նաև դու, երբ կմնաս մենակ՝ ձեռքդ սրտիդ, աչքերդ Աստծուն հառած

**14. Տնային գործեր անելիս երգու՞մ եք, թե՞ մտածում**

Եթե տրամադրությունս բարձր է ապա բարձրաձայն երգում եմ, եթե ոչ՝ մտածում եմ

**15. Փաստաբանի լավագույն գովազդը**

Հաղթած գործերը և բարեխիղճ վստահորդների ճիշտ գնահատականը

**16. Ինչո՞վ է օգնում և խանգարում փաստաբան լինելն անձնական կյանքում**

Օգնում է կյանքը իրական գույներով տեսնել ավելի վաղ, քան կյանքի ուղով անցնելիս, բայց խլում է ժամանակի մեծ մասը, եթե ճիշտ չես բաշխում այն անձնականի և մասնագիտականի միջև

**17. Կա՞ հանգամանք, որը հաճախ Ձեզ համար կոմպլեքսավորվելու պատճառ է դառնում**

Միայն ճամփորդելիս օտար լեզվի գերազանց չիմացությունը

**18. Ի՞նչ խորհուրդ կտաք ապագա փաստաբաններին**

Լինել ազնիվ, օրինապահ, հարգալից, բարեխիղճ, արդարամիտ

**19. Ինչո՞ւ դառնալ փաստաբան**

Արդարության ուղին գտնելու համար

**20. Հաջողության հասնելու հարցում ի՞նչն էք ավելի առանցքային համարում՝ գիտելիքներ, թե՞ անձնական որակները**

Երկուսն էլ: Գիտելիքը զրոյի արժեք ունի, եթե այն ծառայում է սրիկային կամ տմարդիին: Միաժամանակ մարդկային բարձր արժեքներ կրողը չի կարող հաջողել միայն իր որակներով, որովհետև գիտելիքն է կոնկրետ ոլորտում ուղեկցում մարդուն ու դարձնում պահանջված ,հարգված ,հաջողած:

```
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } }
```